Արձանագրություն N 2

<<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/3>> ծածկագրով էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.03.2018թ
ժամը 16:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան

Հանձնաժողովի անդամներ ՝ Տ. Ղուկասյան
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Գ. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/3>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Հ. Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի մարտի 12-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է Չափաբաժին 1-40000, Չափաբաժին 2-390000 ՀՀ դրամ:

բ) Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել 2018 թվականի մարտի 15-ին, ժամը 11:30-ին:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
		Չափաբաժին 1 ***Տպիչների, պատճենահանման մեքենաների, սկաներների վերանորոգման և պահպանման ծառայություններ***			
1	<<Բևեռային ուղի>> ՍՊԸ	ք. Երևան, Մանանդյան 25 շ., բն. 6	44 800	8 960	53 760
2	<<Մանվել Ջալավյան>> ԱՁ	գ/հ ՀՀ ք. Երևան, Մոսկովյան 25, 3/1 տարածք ի/հ ՀՀ ք. Երևան, Նոր-Նորքի 5-րդ զանգված Գալշոյան 19շ., 12բն.	60 240	-	60 240
3	<<Այ Սերվիս>> ՍՊԸ	ք. Երևան, Հ. Հակոբյան 3	69 870	-	69 870
4	<<Անուշ Պետրոսյան>> ԱՁ	ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 5	73 800	-	73 800

Չափաբաժին 2 Օդորակիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ					
1	<<Անուշ Պետրոսյան>> ԱՁ	ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 5	125 000	-	125 000
2	<<Մանվել Ջալավյան>> ԱՁ	գ/հ ՀՀ ք. Երևան, Մոսկովյան 25, 3/1 տարածք ի/հ ՀՀ ք. Երևան, Նոր-Նորքի 5-րդ զանգված Գալշոյան 19շ., 12բն.	140 300	-	140 300
3	<<Վահե Խաչատրյան Հայկի>> ԱՁ	Նանսենի Փ/Շ 18/1/9 Նոր-Նորք 0062	144 000	-	144 000
4	<<Գրիգոր Այվազյան>> ԱՁ	Արարատի մարզ, գ.Ոստան, Թեիլերյան 14	152 000	-	152 000

դ) Հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<Մանվել Ջալավյան>> ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում 1-ին և 2-րդ չափաբաժինների համար բացակայում են հրավերով պահանջվող տեխնիկական բնութագիր-գնացուցակները (Աղյուսակ 1 և Աղյուսակ 2):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշել է ծանուցել վերը նշված կազմակերպությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ արվել է վերջինիս կողմից:

ե) Հայտերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշել է <<Վահե Խաչատրյան Հայկի>> ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ համաձայն Կարգի 41-րդ կետի, քանի որ տուժանքի մասին համաձայնագրում բացակայում են Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, ինչպես նաև վճարման պահանջագրի 2-րդ տողում մասնակցի կողմից լրացվել է <<Ներկայացման ամսաթիվը>>, ինչն ըստ վճարման պահանջագրի լրացման կարգի լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ << ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/3>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Հ. Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Չափաբաժին 1 Տպիչների, պատճենահանման մեքենաների, սկաներների վերանորոգման և պահպանման ծառայություններ		
1	<<Բևեռային ուղի>> ՍՊԸ	բավարար
2	<<Մանվել Ջալավյան>> ԱՁ	բավարար
3	<<Այ Սերվիս>> ՍՊԸ	բավարար
4	<<Անուշ Պետրոսյան>> ԱՁ	բավարար
Չափաբաժին 2 Օդորակիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ		
1	<<Անուշ Պետրոսյան>> ԱՁ	բավարար
2	<<Մանվել Ջալավյան>> ԱՁ	բավարար
3	<<Գրիգոր Այվազյան>> ԱՁ	բավարար
-	<<Վահե Խաչատրյան Հայկի>> ԱՁ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Հ. Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումները և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/3>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանը ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի մարտի

22-ին ժամը 14:30-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	----------	Հ. Բաղինյան
Անդամ՝	----------	Տ. Ղուկասյան
	----------	Շ. Իսախանյան
	----------	Ս. Զաքոյան
	----------	Գ. Խաչատրյան
Արձանագրությունը կազմեց Հանձնաժողովի քարտուղար՝	----------	Տ. Վասիլյան